

ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ ԻՐԱՔԱՀԱՅ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ

(19-20 հոկտեմբեր 2007 թ.)

Հոկտեմբերի 19-ի երեկոյեան Պաղտատի Ս. Կարապետ վանքին մէջ կատարուեցաւ քահանայական կոչման արարողութիւն ձեռամբ Իրաքահայ թեմի առաջնորդ Գերաշնորհ Ս. Աւագ արքեպս. Ասատուրեանի:

Իրաքահայ թեմի գաւակներ Զոհրապ սրկ. Գասպարեանը եւ Նովա սրկ. Մարտիրոսեանը քահանայական ձեռնադրութիւն ընդունեցին ըստ Ձեռնադրութեան Մաշտոցի: Խարտաւիլակի պաշտօնը կատարեց Արժ. Ս. Նարեկ աւագ քին Իշխանեանը:

Տեղի կ'ունենայ նորընծաներու ուղղափառ դաւանութեան հրապարակային խոստովանութիւնը, աշակերտելու եւ հետեւելու Հայց. Եկեղեցոյ ուղղափառ հայրապետներուն:

Հոկտեմբերի 20, Շաբաթ առաւօտուն, չորս Աւետարանիչներու տօնին առթիւ մատուցուած Սուրբ եւ Անմահ Պատարագին, առաջնորդանիստ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցոյ մէջ կը կատարուի քահանայական ձեռնադրութիւնը: Կը պատարագէր թեմիս բարեխնամ առաջնորդ Գերաշնորհ Ս. Աւագ արքեպս. Ասատուրեանը:

«Զի ողորմած եւ մարդասէր եւ Աստուած» մաղթանքէն ետք կը սկսի ձեռնադրութեան կարգը Սուրբ Սեդանի առջեւ:

Առաջնորդանիստ եկեղեցոյ կամարներուն տակ կը հնչէ «Աստուածային եւ երկնաւոր շնորհ» հոգեւորական կոչման շարականը: Այս պահուն նորընծաները կը դառնան դէպի ժողովուրդը՝ վերամբարձ ձեռքերով, ի նշան աշխարհէն իրենց հեռացման: Ապա երբ դէպի Ս. Սեդան կը դառնան, Ս. Աւագ արքեպիսկոպոսը իր ձեռքերը խաչաձեւ կը դնէ նորընծաներու իւրաքանչիւրի գլխուն եւ կ'ըսէ «Ես դնեմ զձեռքս ի վերա սորա եւ դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան, անարատ պահել առաջի սեղանոյ Տեառն Աստուծոյ»:

Յետոյ կը շարունակուի Ս. Պատարագը մինչեւ «Ողջոյն տուք միմեանց» քարոզը: Նորընծաները օրհնութեամբ կը ստանան քահանայական փիլոն եւ Պատարագի զգեստներ:

Ձեռնադրութեան խորհուրդը կը հասնի հոգեւոր վերացման սրբազան բարձունքին, երբ ձեռնադրող Սրբազանը, քահանայական լրիւ զգեստներ հագած, երկու նորընծաներու ճակատն ու ձեռքերը կ'օժէ Սրբալոյս Միւռօնով եւ անոնց հոգեւորական նոր անուն կը շնորհէ: Զոհրապ սրկ. Գասպարեանը կը վերանուանի Ս. Առաքել քահանայ, իսկ Նովա սրկ. Մարտիրոսեանը՝ Ս. Աւետիք քահանայ:

Այնուհետեւ նորընծա քահանաներն իրենց առաջին օրհնութիւնը Աւագ սեղանէն կուտան ժողովուրդին:

Ձեռնադրութեան արարողութենէն ետք Սրբազան Հայրը յաւուր պատշաճի քարոզ արտասանեց՝ բնաբան ընտրելով «Քրիստոսի նամակն էք դուք... գրուած՝ ոչ թէ մեկանով, այլ՝ կենդանի Աստուծոյ Հոգիով...» (Բ. Կորնթ. Գ. 3), որմէ հետեւեալ մեջբերումները կ'ընենք. «Ուրախ է այսօր իրաքահայութիւնը: Ան կ'ապրի հոգեպարար

Ժամեր: Այսօր Հայց. Եկեղեցին կը տօնէ չորս աւետարանիչներու տօնը, որոնք բարի լուրը գրեցին ոչ միայն կորնչական թանաքով, այլեւ Աստուծոյ Հոգիով ներշնչեալ, եւ մենք, որպէս մէկ ճիւղը պատմական այդ Եկեղեցիին, կ'արժեւորենք այդ տօնին յիշատակը մեր թեմի երկու զաւակներուն քահանայական ձեռնադրութեամբ»:

«...Չորս աւետարանիչներու առաքելութիւնն էր բարի լուրը կամ աւետիսը հաղորդել նորահաստատ եկեղեցիներու հաւատացեալներուն, հետեւաբար այդ պատ-



ճառով մենք ընտրեցինք Առաքել եւ Աւետիք անունները, որպէսզի երկու նորած քահանաները առաքեալներու արժանաւոր յաջորդները ըլլան մեր Եկեղեցոյ եւ Քրիստոսի ճշմարիտ խօսքը առաքելու եւ աւետելու»:

Իր քարոզի աւարտին Սրբազան Հայրը շնորհաւորեց նորած քահանաները՝ մաղթելով իրենց երկար եւ արեւշատ տարիներ, լաւագոյնս ծառայելու մեր դարաւոր Եկեղեցիին եւ իրենց խնամքին յանձնուող համայնքին ժողովուրդին: Շնորհաւորեց նաեւ անոնց հարազատներուն, ինչպէս նաեւ երկու կնքահայրերուն՝ յանձինս պրն Պարոյր Յակոբեանին եւ պրն Շանթ Մուրատեանին, որոնք արժանացան ըլլալու ընծայեալներու կողքին որպէս անոնց խնամատարները: Ապա Նորին Սրբազնութիւնը շնորհակալութիւն յայտնեց Քրիստոնեայ Համայնքներու պետական գրասենեակի դիւանապետին, Խորհրդարանի ներկայացուցիչին, Քաղղէացոց Եպիսկոպոսին եւ կղերական ներկայացուցիչներուն, որոնք յարգեցին առաջնորդարանիս հրաւերը եւ ներկայ եղան այս ձեռնադրութեանը:

Ս. Պատարագէն ետքը առաջնորդարանի դահլիճին մէջ նորած քահանայ հայրերը, խարտաւիլակ քահանային եւ երկու կնքահայրերուն հետ, ներկայացան Սրբազան Հօր՝ ստանալու Նորին Սրբազնութեան օրհնութիւնները: Խարտաւիլակ Արժ. Տ. Նարեկ ա. քինյ. Իշխանեան, առաջնորդ Սրբազանին ներկայացուց նորոգ ձեռնադրեալները, ապա Տ. Առաքել քահանան իր եւ իր քահանայ եղբօր անունով

նախ փառք տուաւ Աստուծոյ, որ արժանացուց զիրենք ըլլալու հաւատարիմ ծառաները Ս. Եկեղեցւոյ, ապա շնորհակալութիւն յայտնեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին, որ իր բարձր տնօրինութեամբ ընդունեց զիրենք Ս. Էջմիածնի համալիրէն ներս կրօնական գիտելիքները հարստացնելու համար: Նորընծայ քահանաները յատուկ շնորհակալութիւն յայտնեցին Սրբազան Հօր, որուն ջանքերով եւ քաջալերութեամբ իրենք նուիրուեցան այս հոգեւոր պատասխանատուութիւնը ստանձնելու:

Պրն Պարոյր Յակոբեան արտայայտեց իր անձնական խոհերը որպէս կնքահայրերէն մին, ապա հանդէս եկաւ պաշտօնական խօսքով որպէս Ազգ. Կեդրոնական Վարչութեան ատենապետ:

Սրբազան Հայրը այստեղ ալ ելոյթ ունեցաւ՝ իր հայրական օրհնութիւնները տալով նորած քահանաներուն, անդրադառնալով եւ երկրիս մէջ տիրող անապահով եւ վտանգաւոր կացութեանը, ի մասնաւորի ըսելով. «...իրաքահայերը ահաւասիկ իրենց քրիստոնէական եւ հայուն յատուկ հաւատի, յուսոյ եւ սիրոյ առաքինութիւններով տոգորուն կը դիմագրաւեն ներկայ դրութիւնը եւ կը յաղթահարեն զայն եկեղեցանուէր եւ ազգօգուտ միջոցառումներով, որպիսին եղաւ ձեռնադրութեան այս խորհուրդը, որը նուիրուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ յիսնամեակին (1957–2007)»:

Իր ելոյթի աւարտին Սրբազան Հայրը մաղթեց, որ սոյն ձեռնադրութեան խորհուրդի շնորհները խաղաղութիւն բերեն Իրաքի ժողովուրդին եւ զանազան ազգութիւններուն:

Տ. Առաքել քինյ. Գասպարեան ծնած է Մուսուլ 1950 թուականին եւ թոռն է հանգուցեալ Տէր Խաչատուր քահանային: Ան աւարտած է Պաղտատի Համալսարանի դեղագործութեան ճիւղը 1973-ին եւ երկար տարիներ աշխատած է որպէս դեղագործ:

Տ. Աւետիք քինյ. Մարտիրոսեան ծնած է Քէրքուկ 1978 թուականին: Ան աւարտած է Պաղտատի Համալսարանի քիմիաբանութեան ճիւղը 1999-ին:

2002-2004 թուականներուն հետեւած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քահանայութեան պատրաստման լսարանի յատուկ դասընթացներուն:

ԱՐԱՄ ՍՐԿ. ՔԷԹԷՆՃԵԱՆ
Պաղտատ